

տաք լինի: Հնոց մտնողների մարմնոյ ջեր-  
մութեան վերայ մէկ կամ երկու աստի-  
ճան է աւելանում: Բայց թող մտնէ  
քթին ակնոց դրած մէկը, իսկոյն կը հա-  
լուի ակնոցի զօդը և մեր պարսնի քիթը  
կայրուի, բայց նորա մարմնոյ մնացեալ  
մասներին ոչ մի վնաս չի հանել: Եթէ  
օդը վատ հաղորդող է, հապա ինչո՞ւ ենք  
մրսում, երբ որ մերկ ենք լինում: Եյդ  
նորանից է, որ օդը շարժվում է. յուրա  
օդը մեր մարմնուն դիպչելով քիչ քիչ  
խլումէ մեր տաքութիւնը և հեռացնում,  
բայց եթէ օդը թէ և յուրա էլ լինի, չը  
շարժի, մեր մարմինը շատ քիչ կը մրսի,  
կամ կը պաղի:

(Ե-Ռ-Ա-Ն-Ի-Ւ-Յ-),

## Բ Ա Ր Ա Յ Ա Կ Ա Խ Ա

### ՑՈՒՊԻ ՄՈՎՍԻՍԻ

ՑԵՐԿՎՈՐԴՈՒՄՆ ՊՈՏԱՌԵ ԵՒ ԿԱՐԿԱՏԵ ԶՆԱՎՆ  
ԿԱՐՄԻՐԻ:

Զի՞ եղե քեզ ծով՝ զի յեսս ընկրկիս,  
Զի՞նչ կամ զո՞ տեսեր՝ զի խրամատիս,  
Օրէնք րընութեան յաւորց առաջնոց,  
Տիրէն խորոց և մըկանանց քոց:  
Ի ժամանել քո մակընթացութեան,  
Արգանդ քո աճէր երբ ի յղութեան.  
Իսկ ի տեղատիլ՝ ջորոցդ խուսափիւն,  
Ո՞չ նշաւակէր զծոցոյդ խորութիւն:  
Երդ լեռնակարիսա կոչակքդ ամբառնան,  
Ելիդ ի վերայ ալեացդ դիզանան.  
Երկնաշաս թուին բարձունք ջրածինք,  
Զամկս շօշափին ջրակայտ լիրինք:  
Ցաջմէ տեսանիս խաղաղ ի վայրիդ:  
Ցաշեկէ աչեղ տեսիլ պատուարիդ  
Բրդունք երկնաշափ Մեմիսեան դաշտաց.

Խպնին պատկառեալ յայդ ամբարտակաց,  
Եւ զի՞նչ տեսանեմ. հրանեալ քո հուն,  
Զոր համարէի անյատակ, անչուն.  
2ը քացեալ խպաս հեղուկի թագստեամի,  
Ժժմակք և կայտառք խուսեն փախստեամի,  
Խիճք աւաղախսոն ի գէջ յատակիդ,  
Երկին յեսեալ յոսին մարդարիտ.  
Արահետ լայնեալ ցեղը միւս ափին,  
Երկանեալ ձրդի հանգչյն ակօսին.  
Ա. Ա զի արօր զայս արար պատառուած,  
Քանի՞ րիւրառոր զոյդ ամի՞ք լծուած.  
Կամ օր հերկագործ ես ջորաց հրաման,  
Ըմուստ խոտրիլ յուղոյն սեղչական  
Տարածամեալ էր օր, և կայր արին,  
Խոնարհեալ ի մուստ ի ծաղ եղերտին,  
Երբեւ ոսկեզօծ ափսէ բոլորակ,  
Գայր յարելից լուսին վերելակ,  
Ի կարկառ ալեաց պարսպացելոց,  
Երկանէր տակաւ զարծաթափայլ բոց,  
Հաղարք հազարաց ձրբագունք փայլեալ  
Լոյս արտագատեն ի չուն տագնապեալ  
Եկրկին Մագգոլաց խուժան ելանէր,  
Որ ի ծովափն կցս հապճեակ իջանէր,  
Մարդ և անասուն, հօռք և երամակք,  
Անդէալք անթիւք անչամար դասակք,  
Մառալէր տակաւ բազմամրտիս այն չուն,  
Ընդ լայնատարած խոր յատակ ծովուն,  
Անշարժ, անսասան ջուր երկնակարկառ,  
Կազմէր լնդ աջմէ որմ լուսապատար  
Եհաս նախընթաց երամ բաղմնութեան,  
Յայսկոյս ի ծովեղօ՝ որ կայր յանդիման,  
Յառաջոյ նորա օդաձեմ զինուոր,  
Անխոտոր առնէր զուղին լուսաւոր  
Մինչ համին ի լայն վէմ ապառաժին,  
Սաղք, զրասպ, լնդ պար ուղղերամակին,  
Լուսափայլ զինուոր սրացաւ վերամրաձ,  
Կալ յեստուստ չուոյն՝ քողարկեալ զիւր գարձ,  
Հուն խորայատակ ցամաքեալ ծովուն,  
Խառն խճողէր յախուռն ի չուոյն,  
Ա. Ա հանդիպակաց ծովափն յեգիպտեան,  
Անդնդշատ խոնէր նորահաս խուժան  
Ո՞չ զի՞նչ տեսարան յանդիման աչաց,  
Բանայլ լայնարձակ ծով յատակարաց,

Յանապատէն Սուր ցՔէելսեփիոն,  
Ռփայր բազմերամ՝ կարաւանն անհուն,  
Ո՞չ թիւ զոյր մարդկան, ո՞չ հօալց խաշանց,  
Ո՞չ համար ջոկոց գրքաստոց, եղանց,  
Հանգըն մըկանանց հեղեղեց տարեր,  
Էնդու ծածանին ի շարժ և յերերու  
Նմանեալ ուղինից հոսանաց գալնան,  
Ո՞չ որոշի՝ թէ ո՞յք գան, ո՞յք գառնան.  
Զի որք զընեն զոտս ծագ յանապատին,  
Ճանաչին և իթ՝ թէ ընդ ծով անցին,  
Խոկ որք տակաւին կան ի տաշտ ծովուն,  
Զոր ցամաքեցցց շունչ հարաւ հողմոյն,  
Երեկը՝ թէ կան անշարժ ի հունին,  
Էստ քայլ քայլ թունեն զշափ ծանձաղին,  
Սակայն՝ ոչ այդպէս. այլ արագ ձեզին,  
Ճողովել զանձննու յանզերծ վրտանդէն,  
Զի զայր Փարաւոն վեց հարիւր կառաք,  
Վառեալ բիւրաւոր հեծելազօրքու  
Էնդէր սց փախուստ, հետապնդութիւն,  
Էռ ի՞նչ աչ, երկիւզ, անսանձ բարկութիւն,  
Միթէ՞ նոր ինչ է, զի յօդիպտուէն  
Ազգաց և աղանց գաղթական խուսէ.

( Ա՞սացէ՞ւն է յէրո՞չոյու )

Ա՞նի.

Ի ցօղածաւալ պահուն արեգին,  
Մինչ երգեր սոխակ զվարդ նազելին,  
Նազելին և իմ՝ չընալ Հայաստան,  
Տխուր աւերօք զոյր ինձ յերևան,  
Զի՞արդ ժուժայր սիրտ Հայկազեան ճետիս,  
Ցուրախութեան կալ ի տեսարանիս.  
Աւստի ծեծելով զիմ կուրծ ցաւագին,  
Զու անկեալ հասի յԱնի լալազին:  
Զայն հուսակելի թագուհին Անի,  
Խորին լութեամբ պատեալ ո՞չ, տեսի.  
Վեհ Բազրատունեան Եթոռն և պալատ,  
Ցերկիր խորտակեալ՝ համակ մամուապատ,  
Էնդ հազար և մի խորանք վեհավայր՝  
Համակ հիսաքանչ նկարուք շնեալ,  
Ցողունք ընդ հողով ողջ թաղեալ կային,  
Այլք կիսականգուն կացեալ տիրազին:

Բայց առաւել խոր կարեվէր ի սիրտ  
Ազիմարշ եղէ ընդ գործս Քամեանց բիրտ,  
Որք վեհէն զորմունս սուրբ Եկեղեցեաց,  
Քակեալ՝ կրէին իշխութիւնս տանց,  
Արք մի ողբար զաւակ Հայկազեան՝  
Ի տես այսոցիկ կրրից վատութեան,  
Մինչև ցեղը ննջեա, Ազգ իմ սիրական,  
Զի՞ք ի քեզ եռանդ վեհ ՈԳՒ Հայկան:  
Տես, ո՞չ սոսկ Անին երբեմն մարդաշտ,  
Ել և Արմաւիր, Դուին, Արտաշտ,  
Համայն անտերունչ զոհեալ հընութեանց,  
Ոչ ևս են պարծանքք մերոց Հայրենեաց,  
Ի նոսին բունեն Աղուէս, Խապաստակ,  
Ի բեմ Խորանաց տածեն զիւրեանց ծագ,  
Ցորս, ոհ, Էր երբեմն՝ Պատարագ Քրիստոս,  
Պաշտէր փառաւոր ի ճայնս օրհներգուս  
Գալարին աղիքս ի յուշ անցելոց,  
Թորին արտասուք ի կականս ողբոց,  
Եւ ի տես սոցա ուխտեցի ուխտ տուրբ,  
Սիրել զՄիութիւն սիրոյն վեհապանծ:  
Որ ըզսիրալիս կանգնեացն Միութիւն,  
Նախանձ չարն շրեաց ճիւղաց ի բռն,  
Ռւստի ով Ազգ իմ, սիրեա զՄիութիւն,  
Որով ըզսախին զոցես ճոխութիւն:  
Ուշարակի Արէտիւ Ըստիազարեանց.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Վ. Ա Մ Ե Մ . Մ Ե Լ Ք Բ Ա Ն Խ Ա Ն

Ի Ս . Է Զ Մ Ե Ա Ն Խ Ա Ն

Բարեկարդին Պարսկաստանի ( Նազիմ - իւլ -  
Միւլք ) Վսեմափայլ Մելքոն Խան՝ որ լիազօր  
զիապանութեամբ կ'զնայ յերտուա, և ի Պարս-  
կաստանէ հանեալ յերևան, ի յաջորդ աւուրն ի  
26 և ամսոյ եկաւ ի Մայր Ամոռս Հայաստա-  
նեաց ի Ս. Էջմիածին՝ յուխտ և յերկրպագութիւն  
Արբազան Վայրիս և մեծափառ Սրբութեանց՝  
ևս յայցելութիւն Վ. Եհ. Հայրապետի Ազգիս: